ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

12. 03. 2018թ — ՀՀ Լոռու մարզպետ

N 51 — պարոն Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Ձորագյուղ համայնքի ղեկավարի 26.02.2018թ-ի թիվ 08-Ա, 06.03.2018թ-ի թիվ 09-Ա և 12.03.2018թ-ի թիվ 10-Ա որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար — Ս. Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԹԻՎ 08-Ա**
26.02.2018 թ

ԳՈՒԳԱՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվի դիմումը՝ սեփականության իրավունքով Գուգարքի տարածքային տարածքային սպառողական կոոպերատիվին պատկանող խանութի շենքի հողամասի հողահատկացման հիմքերի վերականգնման մասին. ղեկավարվելով ՀՀ ՀՕ 118-րդ հոդվածի 6-րդ կետով և 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի N ԼԴ/3507/02/15 վճիռը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պատկանող, Ձորագյուղ համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքի տակ գտնվող հողամասի հողահատկացման հիմքերը, Ձորագյուղ համայնքի կադաստրային քարտեզի 06-066-0009-0009 ծածկագրի 229,6 քմ մակերեսով հողի նկատմամբ և հաշվի առնելով որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածի հողերի կազմում՝ օրենքի ուժով սեփականության իրավունքով հատկացնել Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պահպանման և սպասարկման նպատակով ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 9-րդ կետով ։
2. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ձորագյուղ համայնք 1-ին փողոց, 3-րդ շենք:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:
4. Ուժը կորցրած ճանաչել Ձորագյուղ համայնքի ղեկավարի 27.11.2017թ-ի <<Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողամասի հողահատկացման հիմքերը վերականգնելու մասին>> թիվ 20-Ա որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան

ՁՈՐԱԳՅՈՒՂ ... 07300874

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ N 09 - Ա

« 06 » մարտի 2018թ.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-066-0004-0011 ԾԱԾԿԱԳՐԻ՝ ՊԱՐԹԵՎ ՊԵՏՐՈՍԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 - Ն որոշմամբ, հիմք ընդունելով Մանիկոն Գաբրիելյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ձորագյուղի կադաստրային քարտեզի 06-066-0004-0011 ծածկագրի՝ Պարթև Պետրոսի Գաբրիելյանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝ գ. Ձորագյուղ 1-ի փողոց, տուն 17:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10 - Ա

« 12 » մարտի 2018թ.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-066-0013-0009 ԾԱԾԿԱԳՐԻ՝ ԱԶԳԱՆՈՒՇ ՂԱԶԱՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 - Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գրիշա Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ձորագյուղի կադաստրային քարտեզի 06-066-0013-0009 ծածկագրի՝ Աղգանուշ Ղազարի Հովհաննիսյանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝ գ. Ձորագյուղ 2-րդ փողոց, 3-րդ փակուղի, տուն 4:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան